

ԲԱՌԱՅԻՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ԼԵԶՎԻ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Ա. Ա. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Լեզվի մաքրության և բառային փոխառությունների հարցի արծարծումը նոր երևույթ չէ: Դեռ անցյալ դարի կեսերից սկսած՝ հայ նշանավոր գրողներն ու դործիչներն անդրադարձել են այդ հարցին:

Աշխարհաբարի կազմավորման շրջանում Խ. Աբովյանն «խստակ խոսելու» պահանջ էր դնում. «Ախր որ ասում ես՝ սքուշնա եմ, օփիժաթսա էլա, դլուխս քրուժիթսա էլավ, սոփրանիեմեն եմ դալիս... մի մտածիր, թե լսողն ինչ կասի Գիտուն, լուսավորյալ մարդը նա է, որ ամեն լեզու քանի կարա, խստակ խոսա»:

Հետաքրքրական է նկատել, որ արևմտահայ աշխարհաբարի սկզբնավորման շրջանում ևս օրվա խնդիր էին դարձել լեզուն մաքրելու, «մեծագույն աղավաղությանց չափ դնելու» հարցերը¹:

Լեզվի մաքրության, բառային փոխառությունների հարցերին անդրադարձել են ինչպես անցյալում (Հ. Թումանյան, Վ. Տերյան), այնպես էլ մեր ժամանակներում: Հիշենք թեկուզ 1960-ական թթ. վերջերին «Սովետական դրականության» և «Գրական թերթի» էջերում կազմակերպված բանավեճերը:

Սակայն պետք է ասել, որ լեզվի զարգացման տարբեր շրջաններում բոլորվին տարբեր մոտեցումներ են եղել և տարբեր դիրքերից են մեկնաբանվել լեզվի մաքրության և բառային փոխառությունների հարցերը, արտահայտվել են տարբեր, նույնիսկ իրարամերժ կարծիքներ: Այդ տարբերությունները, անշուշտ, պայմանավորված են եղել մի կողմից՝ ժամանակի լեզվական մտածողությանը ու ըմբռնումներով, մյուս կողմից՝ ժամանակի իշխող մտայնությանը ու քաղաքական գործոններով:

Լեզվի մաքրության հարցերին նվիրված բանավեճերում, սակայն, նկատվում է որոշ միակողմանիություն: Ավելի շատ անդրադարձել են օտար կամ անհարկի փոխառությունների հարցերին, և անտեսվել են օտար լեզվամտածողության թափանցումները լեզվի մեջ, իսկ ամենից շատ հենց դրանք են խաթարում ազգային լեզվամտածողությունը: Հաճախ ենք հանդիպում հայաբառ խոսքի, որի մեջ ոչ մի օտար բառ չկա, բայց այդ խոսքը հայերեն չէ, քանի որ կառուցված է օտար լեզվամտածողության կաղապարով: Մի՞թե օտար լեզվամտածողության ներթափանցումներ չեն՝ Ես բաժանում եմ Ձեր կարծիքը (կարծիքը չեն բաժանում, կարծիքին լինում են, ես Ձեր կարծիքին եմ), թշնամին դիրքեր էր գրավել գետի հետևում:

Օտար լեզվամտածողության ներթափանցումների աղբյուրը հիմնականում անճաշակ, ցածրորակ թարգմանություններն են: Սակայն այս հարցը առանձին ուսումնասիրության նյութ է և պահանջում է հատուկ քննություն:

Քանի որ այսօր դարձյալ արծարծվում է լեզուն օտար բառերից մաքրելու հարցը, ուստի այս հոդվածում ցանկանում ենք կանգ առնել լեզվի մաքրության և բառային փոխառությունների հետ կապված մի քանի հարցերի վրա:

¹ Արսեն Այտընյան. Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի. Երևան, 1987, էջ 237—238:

լեզվի բառապաշարը, ինչպես հայտնի է, անընդհատ փոփոխվում, հարստանում և զարգանում է: Լեզվաբանական գիտությունը բառապաշարի հարստացման երկու ուղի է նշում՝ ներքին և արտաքին:

Բոլոր ժամանակներում էլ բառապաշարի հիմնական ուղին եղել և մնում է ներքին՝ սեփական բառակազմական միջոցներով բառապաշարը հարստացնելու ուղին, նաև արտաքին՝ ուրիշ լեզուներից կատարվող փոխառությունները:

Հայտնի իրողություն է, որ հայոց լեզուն ունի բառակազմական ձևերի հնարավորություններ: Բավական է բերել մի բնորոշ օրինակ. ուսերեն *արարքտ բառի փոխարեն կազմել ենք՝ երթուղի (ունենք երթուղային տաքսի), որ արդեն վաղուց է մտել մեր լեզվի գործուն բառապաշարի մեջ: Նույն ձևությամբի տեղափոխությամբ կազմել ենք մեկ այլ բառ՝ ուղեք (ուսերեն *реiß* բառի փոխարեն):*

Եվ իրոք, մեր լեզվի բառակազմական միջոցները հնարավորություն են տվել կազմել բազմաթիվ նոր բառեր և հարստացնել հայոց լեզվի բառապաշարը:

Իր «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ Հր. Աճառյանը վկայում է, որ բառաստեղծումը կամ բառակերտումը լեզվի մեջ բնական երևույթ է՝ և ուղեկցում է նրան զարգացման բոլոր շրջաններում: Բերելով իր ժամանակի գրականության մեջ հանդիպող նորակազմ բառեր՝ Աճառյանը նկատում է. «Մեր մեջ բացասական կարծիք է տիրում նորակերտ բառերի հանդեպ, որոնք անարգական ձևով էլ կոչում ենք «թխած բառ»²: Նման որակումը նա ճիշտ է համարում միայն անճաշակ ու սխալ կազմությունների համար, իսկ ընդհանրապես նորակազմ բառերին նման որակում տալը սխալ է համարում, քանի որ «մեր գրողները բազմաթիվ ընտիր բառեր են կազմել գիտության տարրեր ճյուղերի համար, ճիշտ ու ճիշտ թարգմանելով նվիրական բառերը»³, Հր. Աճառյանը բերում է իր ժամանակի համար նոր համարվող մի շարք բառեր (հեռագիր, հեռախոս, ջեմաչափ, մեմագրություն, մանրէ, ջրածին, քվադրան, վիճակագրություն և այլն), որոնք վաղուց ի վեր մտել են մեր լեզվի գործուն բառապաշարի մեջ:

Լեզվի բառապաշարի հարստացումն ու զարգացումը, անշուշտ, կանգ չի առնում, բայց, ինչպես արդեն ասվել է, այդ գործընթացի վրա որոշակի ազդեցություն է ունենում ժամանակի իշխող մտայնությունը՝ խոչընդոտելով կամ արագացնելով այդ ընթացքը:

Երեսուն-քառասունական թվականներին հազիվ թե մեկը փորձեր օտար բառերը հայացնել, հայերեն համարժեքներ կազմել, քանի որ ընդհանուր միտումը ժողովրդին ազդային ոգուց հեռացնելն էր: Հաճախ էին միջամրտում լեզվի գործերին և նրա բնականոն զարգացումը խոչընդոտում լեզվին պետականորեն պարտադրված հրահանգներով: Այսպես, օրինակ, 1940 թ. հատուկ որոշումով մեր լեզվից հանվեցին հանրապետություն, հեղափոխություն, խորհրդային, պատգամավոր, սահմանադրություն, կուսակցություն, նստաշրջան բառերը (թեև դրանք ավելի հաջող էին փոխառվել բառերից) և լեզվին արհեստականորեն պատվաստեցին դրանց օտար համարժեքները:

Այդ լեզվաքաղաքականության հետևանքով լեզվի բառապաշարի մեջ մտան մեծ քանակությամբ օտար բառեր, անհարկի փոխառություններ՝ խաթարելով մեր լեզվի մաքրությունը: Բայց միայն պետական որոշումներով չէին պարտադրվում օտար բառերը մեր լեզվին: Ելնելով ժամանակի իշխող մտայնությունից՝ որոշ «գործիչներ» հանդես էին դալիս հայոց լեզվի գրողները օտար բառերի դիմաց «կրնկի վրա» բացելու հիմնադրով առաջարկություններով և մեղադրում հայերին բոլոր ալլալեզու բառերն իրենց ազգային

2 Հր. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն. Երևան, 1951, էջ 485:

3 Նույն տեղում, էջ 487—488:

լեզվով թարգմանելու մեջ, Որպես օրինակ բերվում էին մի շարք բառեր, որոնք «անսովոր հնչականությամբ» զործ էին ածվում տպագիր հրատարակությունների մեջ՝ արխիտեկտուր, կոմպիա, ցեմգուրա, ֆիլալոգիա, դեկադա և նույնիսկ լոդիկա, ալգեբրա, տելեֆոն, գագետա, պասպորտ և այլն: Վաթսուհական թվականներին սրան ձայնակցում էին ոչ քիչ թվով լեզվաբաններ ու զրականագետներ:

Մական Հետադա տարիներին, հատկապես 1960-ական թթ. սկսած, մեր լեզվի բառապաշարի հարստացման ուղղությամբ նկատվեցին զրական միտումներ: Նախ՝ ձևորգատումը կաղապարված մտածողությանից և ապա՝ դիտարկյան ու տեխնիկայի զարգացումը հիմքեր ստեղծեցին լեզվի բառապաշարի հարստացման ու զարգացման համար:

Տիկերաբազմադասիական զարգացման հետևանքով մեր լեզվի բառապաշարի մեջ մտան բազմաթիվ նորակազմ բառեր՝ տիեզերանավ, տիեզերակայան, տիեզերագնաց, տիեզերանավորդ, լուսնազնաց, լուսնահող, լուսնապար, տիեզերակապ, մեծակետ, հեռակետ և այլն:

Էգ. Աղայանի «Արդի Հայերենի բացատրական բառարանում» հեռուստալողորդելով կա 40-ից ավելի նոր բառ:

Հատկապես վերջին երեք տասնամյակներին մեր լեզվի բառապաշարը հարստացավ բազմաթիվ նորակազմ բառերով, որոնք վերաբերում են հասարակական կյանքի, գիտության, արվեստի, սպորտի և այլ բնագավառների (ավիատուղևոր, երթուղի, գեղասահք, դահուկորդ, ծանրորդ, դերերգ)⁴:

Լեզվի, զարգացման վերջին երեք տասնամյակի ընթացքում առավել ցայառունոթյամբ դրսևորվեց մեր լեզվի բառակազմական մեծ հնարավորությունը: Կարելի է առանց վարանելու ասել, որ վերը նշված, ինչպես նաև բազմաթիվ այլ բառեր հենց այդ տարիներին ընթացքում են լայն գործածություն ստացել և մտել մեր լեզվի գործուն բառապաշարի մեջ:

Իհարկե, նորակազմ բաժնրի մեջ կարող են լինել (և լինում են) նաև անհաջող կազմություններ, բայց լեզուն ժամանակի ընթացքում ազատվում է այդ կարգի բաժնրից: Կարևորն այն է, որ լեզվի զարգացումն ու բառապաշտրի հարստացումն ընթանա բնականոն հունով և զերծ լինի բռնի միջատակություններից, միևնույնն է՝ լեզուն վաղ թե ուշ կաղապարի այդ արհեստական պատմիապատմաններից:

Բառապաշարի հարստացման, համալրման գործընթացը շարունակվում է. այն առափնյա շխտութեան է մեր օրերում:

1938 թ. սկսած հայերենի, որպես պետական լեզվի, վարկի բարձրացման, կյանքի բոլոր ոլորտներում նրա լիակատար գործառնությունն ապահովումը դարձավ ազգային զարթոնքի հիմնական արտահայտություններից մեկը: Նորից օրախնդիր են դարձել լեզվաշինության, բառային փոխառությունների և լեզվի մաքրության հարցերը: Առանցքային հարցը, սակայն, մնում է բառային փոխառությունների խնդիրը: Այսօր մեր կյանքի ու գործունեության տարբեր ոլորտներում շատ որոշակի նկատվում է մեր լեզուն օտար բառերից մաքրելու ձգտումը: Այժմ, ընդհանուր միտումն այն է, որ լեզուն մաքրվեք նրան պատվաստած անհայտի օտարաբանություններից: Այս մոտեցումը, որպես սկզբունք, անշուշտ ճիշտ է և խրախուսելի:

Երբ օտար ըստի իմաստը կարող ենք արտահայտել հաղեբների բառակազմական միջոցներով, առանց իմաստի խախտում առաջ բերելու, պետք է գործածենք հայերեն համարժեքը, իսկ եթե չը, ապա օտար կամ փոխառյալ բառը։ Սա է լեզվին պարտադրվող խոռոչը տրամաբանությունը, լեզվի զարգացման բնականու ճիշդը։

4 Օրինակները աւ'ս 2 մ. Օ հ ա ն յ ա ն. Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները. Երևան, 1982:

Այսօր, թվում է, լեզուն հետևում է լեզվաշինության իր սեփական սկզբունքներին: Բայց իրականում այդպես չէ: Ուրեք հետևում են ժամանակակից մամուլին, նկատած կլինեն, որ հիմա էլ մեր լեզվի մեջ ազատորեն մուտք են գործում անգլերեն և այլ օտար բառեր՝ կոմերցիա, սենսեյնստ, իմիջ, լեգիտիմ, լոբբինգ, ռեյտինգ, պոպսուլիզմ, ինվեստիցյա և այլն: Էլ չենք խոսում «խոշոր գիրերով» գրված և մեր փողոցները «զարդարող», ըստ սեփական ճաշակի ձևավորած օտարալեզու ցուցանակների ու գովազդերի մասին:

1995 թ. լեզվի տեսչությանը կից ստեղծվել և գործում է հայերենի բարձրագույն խորհուրդը՝ ակադեմիկոս Գ. Ջահուկյանի նախագահությամբ, որ ձևափոխում է եղել ըստ մասնագիտությունների հայերենի տերմինաշինության ու տերմինների մշակման կարևոր գործին: Արդեն քննարկվել, ձևավորվել և հանձնարարվել են գործածության հասարակական-քաղաքական, ինչպես նաև տնտեսագիտական մի շարք հասկացությունների օտար անվանումների հայերեն համարժեքները (բիզնեսմեն-գործարար, էլիտա-ընտրանի, բրիֆինգ-ձեպագրույց, դիվիդենտ-շահաբաժին, մենեջմենտ-կառավարում, ցիկլ-պարբերաշրջան, ագրեսոր-նախահարձակ և այլն): Մեր կարծիքով, հաջող կազմություններ են ռեգլամեն, սվոդկա, էմպերա բառերի համար ստեղծված հայերեն համարժեքները՝ ամփոփում, ամփոփագիր, փորձագետ, ինչպես նաև էմպերիզա, պրոբլեմա բառերի փոխարեն փորձազրույց, նիմնախնդիր:

Բառապաշարի հարստացման հիմնական ուղին, ճիշտ է, սեփական բառակազմական միջոցն է, բայց դա միակ ուղին չէ:

Անառարկելի փաստ է, որ հայերը, հնադույն ժամանակներից սկսած շփվելով տարբեր ժողովուրդների հետ, կատարել են բազմաթիվ փոխառություններ: Հետևելով մեր լեզվի բառապաշարում կատարված տեղաշարժերին՝ նկատում ենք, որ օտար փոխառությունների զղալի մասը ժամանակի ընթացքում կամ դուրս է գալիս գործածությունից, կամ փոխարինվում է հայերեն համարժեքներով: Այսպես օրինակ՝ Ըստ Հր. Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» տվյալների հայերենը փոխառություններ է կատարել պարսկերենից (1405 բառ), հին հունարենից (916 բառ), արաբերենից (702 բառ), եբրայերենից (138 բառ), ասորերենից (209 բառ), բայց այդ բառերի հիմնական մասը մեր լեզվում վաղուց արդեն գործածական չէ: Ու՛ր է այսօր գործածում դարով, դեն, բալափուշ, դավարիշտ, դաստիշոն, վալանդուզ, ֆափառ և նման բառեր: Հունական 916 փոխառյալ բառերից ժամանակակից հայերենում գործածվում է միայն 200-ը, պարսկական 1405 փոխառություններից գործածական է մոտ 680-ը, բայց մեծ մասը խոսակցական լեզվում ու բարբառներում և շատ քիչ մասը՝ դրական լեզվում: Նույն օրինաչափությունը տեսնում ենք նոր ժամանակների փոխառություններում:

Մեր լեզվի ինքնամաքման այդ ընթացքը շարունակվել է նաև մեր ժամանակներում: Լեզվի զարգացման որ շրջանն էլ վերցնենք, չենք կարող խուսափել (և չպետք է խուսափենք) փոխառություններից: Այս հարցում արևելահայ գրական լեզուն, չնայած որոշ մեղանշումներին, հիմնականում ընթացել է ճիշտ ուղիով: Այսօր էլ մեզ համար փոխառությունների հարցում հիմնական ուղեցույց պետք է լինի այն, որ օտար բառի փոխարեն ստեղծենք հայերեն համարժեքը և մեր լեզուն մաքրենք ավելորդ ու անհարկի օտար բառերից:

Արևմտահայերենը, հատկապես պոլսահայ լեզուն, ինչպես այդ նկատում է Հր. Աճառյանը, այնքան էր խճողված թուրքերեն ու հունարեն բառերով, որ կորցնում էր իր ազգային դեմքը: Այդ պատճառով էլ արևմտահայ գրողներն ու գործիչները որդեգրեցին մի սկզբունք, ըստ որի հայերեն լեզվից պետք է վտարվեն ոչ միայն բոլոր թուրքական բառերը, այլև, Աճառյանի վկայությամբ, ամեն մի եվրոպական բառ, ինչ էլ ուղում է լինի, պետք է փոխարինվի հայերեն համարժեքով: Ահա թե ինչով է բացատրում այդ

երեւութի պատճառը Արսեն Այտնյանը. «Մեր ժողովրդական խոսվածքին եկամուտ օտարությունը չափազանցությունն էր, որ աչքերը բացավ և լեզվին աղղայնությունը մեջ հավասարակշռության կորուստը պատճառ ու դրդիչ եղավ այն մեծ նորոգության առաջին քայլին՝ առնելու, ամեն օտարություն այնպես վրեժխնդրությամբ բնաջինջ ընկելով՝ որ այսօրվան օրս քիչ կա լեզու այնչափ յուր սեպհական տարրերեն բաղկացած՝ ինչչափ այս ուղղված աշխարհարարը»⁵:

Հր. Անտոյանը նույնպես այդ «տարապայման խոսություն» պատճառը, «օտարամերժ ոգին» բացատրում է պոլսահայ բարբառի փոխառությունը չափազանցությամբ⁶:

Աշխարհարարի սկզբնավորման շրջանից ժառանգած այս մտայնությունը փոխառությունների հարցում որդեկրեցին Սփյուռքի հետադա շրջանի դործիչները:

Հասկանալի է, որ բառային փոխառությունների հարցում մենք չենք կարող հեռանալ արեւմտահայերենից:

Զպետք է մոռանալ, որ լեզվի մեջ դործում է նաև ավանդույթի ուժը. եթե ավել բառը մտնում է ժողովրդի լեզվամտածողության մեջ, տարածվում է, այնքան էլ հեշտ չէ այն փոխարինել մեկ այլ բառով:

Այն դեպքում, երբ հայերենի բառակազմական միջոցներով ստեղծված բառը իմաստով կամ անսովոր հնչականությամբ չի կարող փոխարինել օտար կամ փոխառյալ բառին, ուրեմն պետք է գործածել փոխառյալ բառը:

Իսկոյ մասնականներում էլ որեւէ հիմնավորում չունեցող մաքրամոլությունն ձգտումը, որ դրսևորվում է լեզուն մաքրելու կարգախոսով, հաջողություն չի ունեցել:

Եթե փոխառյալ բառը լայն տարածում ունի լեզվում, շատ գործածական բառ է, և ստեղծվել է նրա հայերեն համարժեքը, կարելի է դրանք զուգահեռ դործածել որոշ ժամանակ, մինչև որ լեզուն ինքը որոշի, թե դրանցից որը դործածի, որը դուրս գցի: Այսպես, օրինակ, ունենա՞լ ինդեֆս-դասիչ, ինֆլյացիա-սղան, զնան, չեկ-վնարագիր, ռեյտինգ-վաբկանիչ, դեմոկրատիա-ժողովրդավարություն, դիպլոմ-վկայագիր, դիսերտացիա-առեւնախոսություն, ֆակտում-ապրանքագիր, օրգեր-հատկագիր, վաուչեր-հավաստագիր:

Ի՞նչ կխանգարի, որ որոշ ժամանակ կողք կողքի գործածվեն այս բառերը, մինչև որ դրանցից մեկնումակը հաղթի, այսինքն՝ տարածված գործածություն ունենա և դուրս մղի մյուսին: Համենայն դեպս լեզվի զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ հրահանգներով լեզվի գործերին միջամբողջ օգտակար չէ լեզվի համար, և լեզուն ինքը ինքնամաքման իր հատկությամբ կորոշի այդ բառերի ճակատագիրը:

Հետևաբար, նոր բառեր կազմելիս միշտ պետք է առաջնորդվել լեզվի զարգացման ներքին օրենքներով: Այս հարցում չի կարելի ցուցաբերել շտապողականություն և մեխանիկական մոտեցում:

Նոր բառերի կազմումը պահանջում է ոչ միայն լեզվական անհրաժեշտ դիտելիքներ, հայոց լեզվի բառակազմական նորությունների իմացություն, այլև (որ շատ կարևոր է) լեզվական ճաշակ:

Նոր բառեր կազմելիս պետք է նկատի ունենալ մի շարք գործոններ՝ ա) բառի իմաստային կողմը, թե այն որքանով ճիշտ է արտահայտում տրվյալ հասկացությունը, բ) բառի կազմության ճշտությունն ու համապատասխանությունը մեր լեզվի բառակազմական օրինաչափություններին, գ) նորակազմ բառի ձևությունների՝ լեզվի տվյալ շրջանում գործող իմաստները, դ) նոր բառի հասկանալիությունն ու դյուրահունչ լինելը:

Նշված գործոնների մեջ հիմնականը, անշուշտ, նորակազմ բառի՝ տրվյալ հասկացությունը, իմաստը ճիշտ արտահայտելն է, այլապես որքան էլ

⁵ Ա. Այտնյան. նշվ. աշխ., էջ 237:

⁶ Հ. Անտոյան. նշվ. աշխ., էջ 478:

ճիշտ կազմած լինի բառը, միևնույն է, երկար կյանք ունենալ չի կարող: Բերենք մի երկու օրինակ. տարիներ առաջ մեր հրականագետներից մեկը եռվել բառի փոխարեն (գալիս է լատիներենից՝ novellus, իտալ. novella): շրջանառության մեջ դրեց նորավեպ բառը, որը լայն տարածում չգտավ: Եվ իսկապես, ի՞նչ ասել է նորավեպ: Լեզուն ի՞նչ կկորցնի, եթե ասենք նովել ընդհանուրին ավելի հասկանալի բառը: Դրան հակառակ, չաջող նորակազմությունը կարճ ժամանակում կարող է տարածվել և ընդհանուր գործածություն ունենալ՝ մտնելով գործուն բառապաշարի մեջ: Այսպես օրինակ՝ 1960-ական թթ. ՁԾԱՄԿՐԱԵՄՈՒՄ օտար բառի փոխարեն կազմվեց ղիմուղ բառը: Այդ բառի առաջին գործածությունը հանդիպել ենք հանգուցյալ լեզվաբան Աշոտ Աբրահամյանի՝ «Ավանգարդ» թերթում տպագրված (1960 թ.) մի հոդվածում: Այն այսօր շատ գործածական բառ է:

Մեկ այլ օրինակ. ոռոսերեն յրաՅԱՏԱՅԱՑԱՆԱԳ բառի փոխարեն կազմել և շրջանառության մեջ են դրել նրա հայերեն համարժեքը՝ սևվալալանալանո-հում: Այսօր մեր մամուլը հեղեղված է այդ բառի գործածությամբ: Ի՞նչ երբ լեզվի բարձրագույն խորհրդում քննարկվում էր տնտեսագիտական մի քանի տերմինների հայերեն համարժեքներով փոխարինելու հարցը, մասնագետներն առարկեցին այդ բառի դեմ՝ պատճառաբանելով, որ այն ճիշտ չի արտահայտում երևույթի էությունը. սեփականությունը չի կարելի շնորհել, այն տրվում է, գնվում ու վաճառվում, բայց ոչ շնորհվում, հետևաբար պետք է լինի կամ սեփականատերում, կամ մասնավորեցում: Իսկ դա նշանակում է՝ սեփականաշնորհում բառը, շնայած այսօր տարածված գործածություն ունի, իր իմաստային հատկանիշով սխալ կազմություն է: Ուրեմն, նոր բառ կազմելիս նախապես պետք է մտածել նրա իմաստային կողմի ու կազմության ճշտության մասին և ապա առաջարկել գործածություն:

Վերջին հինգ-վեց տարում մեր լեզուն օտար ու անհարկի բառերից մաքրելու դրական միտումի հետ միաժամանակ նկատվում է անհանդստություն պատճառող մի բացասական մտայնություն՝ ամեն մի օտար կամ փոխառյալ բառ քակրգմանել հայերեն և նույնիսկ բնդհանուրին նախաձեռնելու և մատչելի, տարածված գործածություն ունեցող բառի փոխարեն անպայմանաբար ստեղծել նրա հայերեն տարբերակը:

Ցավալի է, բայց փաստ է, որ այսօր փոխառյալ բառերը հայացնելու դարձել է մի տեսակ մոլուցք: Առանձին անհատներ, նույնիսկ լրագրող ու հանդեսներ, լեզվաշինարարի դեր ստանձնելով, առաջարկում են հայացնել մեր լեզվում արդեն իսկ իրենց գոյության իրավունքը վաղուց նվաճած և լայն գործածություն ունեցող մի շարք բառեր: Ահա մի փունջ այդ կարգի «հայացված» բառերից, որ առաջարկվում է գործածել «օտար» բառերի փոխարեն. կոմիկ-ծաղրասաֆ, կոնպակտ-հակիրճակ, միստիկ-կուրախակալ, սարկազմ-խայթածաղր, պարտիզան-գաղտնաբերական, կոմպոտ-մեղրաբեր: Ո՞ր հայն է, որ երբեք կգործածի այս կարգի «հայացված» բառերը:

Լեզվին շատ թե քիչ ծանոթ ամեն մի մարդ դիտե, որ նոր բառեր կազմվում են լեզվում արդեն եղած արմատներով ու ածանցներով՝ նկատի ունենալով դրանց՝ լեզվի ավելի շրջանում գործուն իմաստները: Իսկ ի՞նչ հասկանանք այսպիսի «հայացնող գործությունից», երբ մատուցվել (մոտոցիկլետ) բոլորին հասկանալի բառի փոխարեն առաջարկվում է գործածել սրբաբան: Բայց ընթ-ը գիտակցվում է որպես առանձին արմատ, որ նրանով նոր բառ կազմենք, այն էլ մեծ ածանցով: Ունենք ընթանալ բայը, որի անցյալ կատարյալի հիմքն է՝ ընթաց: Նոր բառեր կազմվում են միայն այդ ձևավոր հիմքով (Գ. Ջահուկյանի տերմինն է), ինչպես՝ ընթացք, սրբաբան, համընթաց և այլն: Ինչ վերաբերում է մեծ ածանցին, ապա այն, ինչպես

7 Օրինակները վերցրել ենք Լևոն Հախվերդյանի «Ջրույցներ լեզվի մասին» գրքից (Նրևակ, 1993, էջ 160). այդ օրինակները քաղված են «Հայոց լեզուն և դրականությունը գյուրու» հանդեսից (1986):

նկատելի է Մ. Արեղյանը, ունի գործողության արդյունքի իմաստ (կտրոն, չարդոն)՝, Հետևաբար, սխալ կազմություններ են ինչպես այդ սրբնությունը, այնպես էլ երրորդն ու վարոնը, որ առաջարկվում են տրանսպոստ ու տրակտոն բառերի փոխարեն: Եթե անգամ հնարավոր լիներ կազմել վարոն բառը, ապա դա կնշանակեր ոչ թե վարոն, այլ վարած: Ի դեպ, մի այլ տեղ հանդիպելիս տրանսպոստ բառի փոխարեն փոխադրանի, բայց դա նույնպես անհաջող կազմություն է:

Վերը բերված բառերի ցանկում է նաև մետրոն: Ամենքին հասկանալի առաջին փոխարեն առաջարկվում է նեպեր, իսկ էլեկտրականություն, էլեկտրապլիտա բառերի փոխարեն՝ մարծ և մարծակ: Բայց ի՞նչ բան են այդ մարծն ու մարծակը: Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» այդպիսի արմատ չկա, նման բառի չենք հանդիպում նաև «Հայկազյան բառարանում»: Երկուսում էլ կա մարծել (կամ մործել) բառը՝ շփել, քսել, մարմինը լուրջով տրորել նշանակությամբ (զմարմինն մարծել), իսկ Մուսխիսյանի «Հայերեն բացատրական բառարանում» կա մարծ բառը՝ աստղանիշով, որ նշանակում է հազվագյուտ բառ կամ նշանակություն՝ մարզ հղումով, որ նշանակում է ծառազավառ և փոխառություն է պահլավերենից: Բայց այդ արմատը և առհասարակ այս ամենը ի՞նչ կապ ունի էլեկտրականություն բառի հետ: Եթե անգամ կապ ունենար, ո՞վ է ստիպել մեզ, որ հրաժարվենք բոլորիս հասկանալի բառերից և զբաղվենք սարքովի բաներով:

Բայց դավաճանական բառերի շարքը դրանցով չի սահմանափակվում: Ահա մի «նորամուծություն»։ Վառելագազի փոխարեն՝ կիզող (°), իսկ գաղօջտիս հաջող կազմության փոխարեն կիզողակ: Չէ՞ որ կիզող ենթակալական դերբան ալտո գործածվում է իր բայական արժեքով և նշանակում է այրող, իսկ դադր կիզվող, այրվող նյութն է և ոչ թե առարկան: Եթե էլեկտրականություն և գազ բառերի փոխարեն գործածենք մարծն ու կիզողը, այդ դեպքում ինչպե՞ս վարվենք այն հարյուրավոր բառերի, հետ, որոնք կազմված են ալգ արմատներից՝ էլեկտրագողող, էլեկտրամեկուսիչ, էլեկտրաշարժիչ, էլեկտրաբաշ, գազատաք, գազախցիկ, գազամատակարարում, գազախողովակ և այլն: Մի պահ լսենք այս «լեզվաշինարարներին» և մետրոն փոխարինենք նեպերով, վազոնը՝ ընթակով, տեխնիկան՝ շարժույթով (մեխանիկական ֆակուլտետն էլ կոչենք շարժակա՞ն), հոնորարը՝ վարձարանկով, պրոցեսը՝ գործույթով (ուրեք գործառույթ հաջող կազմությունը), Լևոնիստոսը՝ վոտեանով, սիմֆոնիան՝ դաշնույթով, ապա դրանով մեր լեզուն կմաքրենք «օտար ու խորթ» բառերից, թե՛ ընդհակառակն, ավելի կադրատույններ այն, եվ մի՞թե այս ամենը կապ ունի գիտության կամ լեզվի հետ, այո ո՞ր ենք հասել, որ տեղից վեր կացողն ուզում է լեզվաշինությանը դրադվել: Պարույր Սևակի բառերով ասած՝ հայոց լեզուն որբի զուլխ չէ, որ ամեն մեկը նրա վրա «դալլաբություն» սովորի: Վերը բերված «հայալուծում» բառերը, որ անշուշտ, շարժում են ընթերցողի զարմանքը, ապալուծում են ոչ միայն անհրաժեշտ դիտելիքների, այլև լեզվական ճաշակի լուսավորություն:

Այդ երևույթն ընդգծելու համար բերենք ևս մի օրինակ. նմանատիպ մի բառացանկ (թվով 106 բառ) ներկայացրել էր «էքսպրես» գովազդային թերթը 1997 թ. 2-րդ համարում: Բերում ենք մի փունջ էլ այդ նոր «հայացված» բառերի՝ բնթերյուղներին, թողնելով վերծանելու դրանց իմաստները. անջատոց (°), անփայլ, գեյստաբեր, որոշմոց, գատիչ, լուցիչ, կախազարդ, հարկաշարժ, խցողակ, լայնադարակ, դուրակիք, ներատախտակ, կողապատավոր, տախտակադրվադ, կայունաբաշ և այլն: Այս բառացանկին ծանոթանալիս ակամայից տարակուսանքի մեջ ես ընկնում: Մի՞թե կարելի է այսպիսի լուրջ դործի նկատմամբ այդպիսի մակերեսային մոտեցում ցուցաբե-

րել: Չէ՞ որ լեզուն գիտություն է, իսկ սիրողական մակարդակով լեզվի հարցերին մոտենալ չի կարելի: Նկատենք, որ այդ բառերը հիմնականում քաղված են «Ռուս-հայերեն» քառահատոր բառարանից (1954—58) և ըստ ճշակի «հայացված»: Բայց հո չի կարելի ռուսերեն այս կամ այն բառի անհաջող թարգմանությունը վերցնել և առաջարկել գործածության:

Իհարկե, հնարավոր չէ անդրադառնալ այդ բառացանկում բերված բոլոր բառերին, բայց ստիպված ենք գոնե մի քանի օրինակ բերել:

Ռուսերենի проба բառը, որ ունի մի քանի իմաստներ, թարգմանված է հարգադրում: Բայց ռուսերենում կա նաև проба металола, проба твёрдости որոնց դիմաց ունենք հայերեն հաջող համարժեքներ՝ մետալամուլ, ապահովում: Այդ բառի միայն մեկ իմաստն է (թանկագին մետաղների՝ ոսկու, արծաթի վրա եղած դրոշմը) համընկնում թարգմանված բառին: Բայց կարելի՞ է բառիմաստն այդքան նեղացնել անհաջող թարգմանությամբ՝ հարգադրում: Իսկ ինչո՞ւ չի կարելի ասել որակադրում, որականիշ, որն ավելի հասկանալի է ու մատչելի:

Ռուսերենում светильник-ը գրքային բառ է, թարգմանված է աշտանակ: Բայց չէ՞ որ դա կանթեղն է, իսկ աշտանակը մոմակալն է: Маска բառի փոխարեն գրված է դիմաքանդակ, բայց маска-ն դիմակն է և ոչ դիմաքանդակը: Сервиз-ի փոխարեն՝ սպասքաղաք: Ինչո՞ւ, երբ ունենք ավելի կարճ բառ՝ սպասք:

Բերված օրինակներն էլ բավական են՝ համոզվելու համար, որ լեզվի բառապաշարի հարստացման, նրա զարգացման հարցերում չի կարելի ցուցաբերել շտապված ու մակերեսային մոտեցում, այլ պետք է առաջնորդվել գիտական ճշգրիտ չափանիշներով: Անշուշտ, չպետք է կաշկանդել և խոչընդոտել հայոց լեզվի բառաստեղծական հնարավորությունները, բայց և չի կարելի լեզուն մաքրելու անվան տակ տեղի ու անտեղի դիմել արհեստական կազմությունների և դրանք պարտադրել լեզվին, միևնույն է, լեզուն չի ընդունի այդ արհեստական բառակերտումները:

Սեփական բառակազմական հնարավորությունները դիտելով որպես հայոց լեզվի բառապաշարի հարստացման հիմնական միջոց՝ մենք պետք է խնամքով ու մտածված օգտվենք նաև փոխառություններից, որոնք բերում են փոխատու լեզվին բնորոշ գաղափարներ ու հասկացություններ, մեր լեզուն չկտրենք գիտության զարգացման ընդհանուր օրինաչափություններից, շահմանափակենք նրա զարգացման հեռանկարները՝ հանուն մեր լեզվի վաղվա օրվա: